ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1484 28.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՏՍԿ
ՍՏԻՑ № 9360
31 10 14

Հարգելի պարոն Գասպարյան.

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ սույն թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 13:30-ին ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի թեժ գծի հեռախոսահամարին ահազանգ է ստացվել ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ-ից: Ահազանգողը հենց ձերբակալվածն էր, ով գտնվում էր տվյալ բաժնի ձերբակալվածներին պահելու վայրում:

Հեռախոսազրույցի ընթացքում ձերբակալվածը տեղեկացրեց, որ իրեն ոստիկանները ծեծել են և ներկայիս պահին գտնվում է ՁՊՎ-ում և ոչ մի պատշաճ բուժօգնություն չի ցուցաբերվում, ավելին՝ հանդիսանում է հոգեկան հիվանդ:

Հարկ ենք համարում նշել, որ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով նախատեսվում է <<... *մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն*>>: Իսկ ՁՊՎ-ների աշխատանքները կանոնակարգող ներքին կանոնակարգի 179-րդ հոդվածով ամբողջովին կանոնակարգված է նշված գործառույթը. <<*ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածներին*>>:

Դիտորդական խումբը անհապաղ արձագանքեց ահազանգին և այցելություն կատարեց ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ:

8394
30 10 14

ՀՀ ք. Երևան 0002, Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Տվյալ ձերբակալվածի հետ հանդիպելով Դիտորդական խումբը պարզեց, որ Վանաձոր քաղաքի X հասցեում ոստիկանները իրեն ծեծի են ենթարկել, որից հետո բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժին: Իր իսկ խոսքով, որոշ ժամանակ գտնվելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնում, պարզաբանումներ կատարելուց հետո նրան ազատ են արձակել:

ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնից դուրս գալով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Բազումի բաժնի ոստիկանները կրկին նրան բերման են ենթարկել Բազումի ոստիկանության բաժին, որից հետո ձերբակալել և տեղափոխել են ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ:

Դիտորդական խմբի ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ

1. Ա. Թամարյանը ՁՊՎ էր ընդունվել 25.10.2014թ-ին ժամը 05:10-ին և ժամը 05:20-ին հրավիրվել է շտապ օգնություն և բժիշկների կողմից էլ արձանագրվել էր նրա մարմնական վնասվածքները: Հաջորդ երկու օրերի ընթացքում ևս 4 անգամ ցուցաբերվել է բուժօգնություն և բժիշկների կողմից առաջարկություն է արվել վիրաբույժի և հոգեբույժի կոնսուլտացիա, որին ընթացք չի տրվել/*փաստը հաստատող լուսանկար 1,2,3,4*/:

2. Այցելության պահին արձանագրեցինք, որ նրա բերանից անընդմեջ արյունահոսում էր և ձեռքում գտնվող սրբիչը ամբողջությամբ արյունոտ էր:

3. Ա. Թամարյանը նշեց, որ իրեն փաստաբան չի տրամադրվել ձերբակալման պահին, որը արձանագրված էր նաև ձերբակալման արձանագրության մեջ: Ձերբակալման արձանագրության մեջ նաև նշված է ոստիկանների կողմից ծեծի ենթարկելու փաստը: /*փաստը հաստատող լուսանկար 5/:*

4. Դիտորդական խմբի անդամները մինչ ՁՊՎ այցելելը հեռախոսազանգի միջոցով փորձել էին ճշտել տվյալ անձի հետ կապված բոլոր խնդիրները՝ ծեծի ենթարկելու, բուժօգնություն չտրամադելու և տվյալ պահին նրա կարգավիճակի մասին: Հերթապահ մասի պետը պարզաբանեց, որ նրան համապատասխան բուժօգնություն է ցուցաբերվել և նա տվյալ պահի դրությամբ 23.10.2014թ. ժամը 16:53-ին արդեն գտնվում է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում խափանման միջոցի հարցը քննարկելու նպատակով: Փաստենք, որ դիտորդական խումբը, երբ այցելեց ՁՊՎ՝ ժամը 17:20-ին, արձանագրեց, որ տվյալ անձը ոչ մի տեղ չի տեղափոխվել, և ուղեկցողները նոր եկել են, որպեսզի տեղափոխեն դատարան:

5. Տվյալ ձերբակալվածի ուղեկցումը կատարվում էր հերթապահ մասի պետի անձնական նախաձեռնությամբ, որովհետև Լոռու մարզի դատախազ Ռ. Մինասյանի հայտը.

- ուղղված էր ոստիկանության Լոռու ՄՎ պետ, ոստիկանության գնդապետ՝ Ա. Կարապետյանին և Ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ՝ Է.Հ. Շարմազանովին,
- լրացված էր թերություններով և հիմք չէր ընդունվել ՀՀ կառավարության 02.04.2002թվ-ի թիվ 351-N որոշման 41 կետի պահանջը:

Հերթապահ մասի պետը անտեսելով բաժնի պետի հանձնարարությունը և տվյալ հայտի թերությունները, կազմակերպում էր ձերբակալվածի ուղեկցումը: Երբ Դիտորդական խմբի անդամները խնդրի վերաբերյալ բարձրաձայնեցին, հերթապահ մասի պետը պարզաբանեց, որ դա իրենց հայտը չի, որ իրենց հայտը հերթապահ մասում է և հիմա կբերի, որից հետո հերթապահ մասի պետը վերցնելով տվյալ հայտը լքեց ինչպես ՁՊՎ-ի վարչական մասի տարածքը, այնպես էլ հերթապահ մասի տարածքը և միայն որոշ ժամանակ անց բերեց նույն փաստաթուղթը արդեն բաժնի պետի մակագրությամբ: /*փաստը հաստատող լուսանկար 7/:*

6. Արմեն Թամարյանի հագուստի և անձնական իրերի վերաբերյալ արձանագրությունը կազմված էր առանց ամիս - ամսաթվի /*փաստը հաստատող լուսանկար 8/:*

7. Նշենք, որ ըստ <<Ձերբակալված անձանց բուժզննության և բուժօգնության>> գրանցամատյանի՝ Ա. Թամարյանին 25.10.2014թ.-ին երկու անգամ՝ ժամը 10:28-ին և ժամը 15:30-ին բուժօգնություն է ցուցաբերվել, որտեղ էլ բժիշկները համապատասխան գրառումներ են կատարել: Բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում 25.10.2014թ. գրանցված է մեկ գրառում՝ բուժսենյակ տեղափոխելու և բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ ժամը 15:50-ից մինչև ժամը 15:55:

8. Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ 1032 համարի տակ նշված է, որ Ա. Թամարյանը 26.10.2014թ. ժամը 12:25-ից մինչև ժամը 12:30-ը օգտվել է հեռախոսազանգի իրավունքից, որը իրականությանը չի համապատասխանում, որովհետև զանգը կատարվել է Դիտորդական խմբին՝ ժամը 13:30-ին: /*փաստը հաստատող լուսանկարներ 9,10,11,12/:*

Միաժամանակ Ձեզ ենք ներկայացնում 13,14,15,16 լուսանկարները, որտեղ բժիշկները տեղեկանք են կազմել վերջինիս մարմնական վնասվածքների և բուժօգնության վերաբերյալ:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացվածը և տալ մեկնաբանություն փաստերի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org